

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ

20.12.2011թ.

Նախագահում էր մարզպետ Ն. Պողոսյանը, մասնակցում էր մարզի
խորհրդի 92 անդամներից 83-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Ղուկասյանը,
Գ. Ստեփանյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլիաթյանը,
մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների
վարիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման
ցուցանիշների և 2012 թվականի համայնքային բյուջեների հաստատման մասին:

/Զեկ. Ա. Սահակյան – ֆինանսական և սոցիալ - տնտեսական
զարգացման վարչության պետ/

Այլ հարցեր:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ն. Պողոսյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ձեռնարկել միջոցներ համայնքների 2011 թվականի բյուջեների
կատարողականը ըստ հարկատեսակների հարյուր տոկոս ապահովելու
ուղղությամբ և մինչև ս/թ դեկտեմբերի 25-ը մարզպետարան ներկայացնել 2012
թվականի բյուջեների նախագծերը.

2) աշնանացան ցորենի և մյուս մշակաբույսերի փաստացի
ցանքատարածությունների ճշգրտված տվյալները մինչև ս/թ դեկտեմբերի 25-ը
ներկայացնել Հայաստանի Հանրապետության վիճակագրական ծառայության
Գեղարքունիքի մարզային գործակալություն.

3) աջակցել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011
թվականի N 79 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովին՝ համայնքներում
առկա անասունների /մանր և խոշոր/ 2012 թվականի համատարած հաշվառումը
հնարավորինս ճշգրիտ իրականացնելու համար:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ